ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«11» 08 2023թ.

№ ԿԵՆՏ/2-1063

«Մոսսթոն Էնջինիրինգ» ՍՊԸ
տնօրեն՝ Ա. Մեջլումյանին
հասցե՝ Trust Company Complex, Ajeltak Road,
Ajeltake Island, Majuro, Marshall Islands, MH 96960,
հեռ.+374-10-48-91-92,
էլ. հասցե՝ mosston@professional-systems.net

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մոսսթոն Էնջինիրինգ» ՍՊ ընկերության միջև 30.06.2022թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-22-5-8 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը ոչ ուշ, քան 2023թ. հունիսի 30-ը պետք է մատակարարեր վերը նշված Պայմանագրի 1-ից-4-րդ չափաբաժինների մասով նախատեսված ապրանքներ, որոնք, սակայն ընդհանրապես չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. օգոստոսի 11-ին միակողմանի մասնակի՝ նշված չափաբաժինների մասով, լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Մոսսթոն Էնջինիրինգ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 2 883 723 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, որը հաշվարկված է մինչև 21.07.2023թ. դրությամբ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը ձեռնարկում է միջոցներ՝ «Մոսսթոն Էնջինիրինգ» ՍՊ ընկերության կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված կանխավճարի ապահովման գանձման ուղղությամբ, որը կազմում է 411 960 450 ՀՀ դրամ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am